

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ԴՐԱՄԲՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԳԱԳԻԿԻ

**ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Գիրական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վ. Լ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ա. Խ. Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ.
Ա. Ս. Թադևոսյան

Առաջադար կազմակերպություն՝

Հայաստանի ազգային ագրարային
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. հունիսի 21-ին ժամը 13.30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009, Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017թ մայիսի 20-ին:

**015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արենախոսության թեմայի արդիականությունը: Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցությունը արդիական խնդիր է ոչ միայն Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործում, այլ նաև դարձել է համաշխարհային տնտեսության մրցունակության բարձրացման գործոնը: Դա նշանակում է, որ հարկային հարաբերությունների ու հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը օբյեկտիվ անհրաժեշտություն և գործարար միջավայրի զարգացման հիմնական երաշխիքներն են: ՀՀ տնտեսության մրցունակության ներկայիս մակարդակը և դրանում գոյություն ունեցող բազմաթիվ խնդիրներն ազդում են գործարար միջավայրի, ներդրումային ակտիվության, մակրոտնտեսական և բյուջետային ցուցանիշների վրա: Պետք է նշել, որ ի թիվս դրանց, հանրապետությունում դեռևս չի ձևավորվել մրցունակ հարկային համակարգ, ինչը կաշկանդում է տնտեսության կայուն զարգացմանը, բնակչության բարեկեցության բարելավմանը:

Հետևաբար՝ ՀՀ տնտեսության զարգացման գործում անհրաժեշտ է գնահատել գործարար միջավայրի զարգացմանը նպաստող և կաշկանդող գործոնները, առանձնացնել հարկային համակարգում գոյություն ունեցող թերացումներն ու բացթողումները, վերլուծել մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գործարար միջավայրի և հարկային համակարգի կայունության վրա, ինչպես նաև՝ առաջարկել միջոցառումներ՝ ուղղված ՀՀ տնտեսության իրական հատվածում ներդրումների ներգրավմանն ու գործարար ակտիվության բարձրացմանը: Այդ հիմնախնդիրներին էլ վերաբերում է ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը, ինչպես նաև՝ կատարման անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է հիմնավորել ՀՀ գործարար միջավայրի վրա ազդող հարկային համակարգի դերը, ինչպես նաև առաջարկել ուղիներ հարկային համակարգի բարելավման համար: Այս նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել գործարար միջավայրի էությունը, կառուցվածքն ու առանձնահատկությունները,
- վերլուծել գործարար միջավայրի և հարկային մարմինների պետական կարգավորման հիմնախնդիրները,
- դիտարկել ՀՀ գործարար միջավայրի ձևավորման ինստիտուցիոնալ հիմքերն ու իրականացնել դրանց համեմատական վերլուծություն,
- վերլուծել հարկային համակարգի բարելավման ուղիները և առաջարկել հարկային միջոցառումներ՝ ուղղված ՀՀ տնտեսության ոլորտներում ներդրումների ներգրավմանն ու կայուն տնտեսական աճի ապահովմանը,

- առաջարկել իրականացնել հարկային բարեփոխումներ՝ ուղղված հարկային հարաբերությունների պարզեցմանը և ինտեգրացիոն գործընթացների ներդաշնակեցմանը:

Հեղազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ գործարար միջավայրն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման գործում հարկային համակարգի ազդեցությունն է:

Հեղազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել գործարար միջավայրի և հարկային համակարգի վերաբերյալ տարբեր տնտեսագետների կողմից լայն կիրառություն ունեցող հրապարակումները, աշխատություններն ու մենագրությունները, ինչպես նաև առաջադրած հիմնարար տեսական ու վերլուծական բնույթի դրույթները:

Հետազոտությանն անհրաժեշտ տեղեկատվական հիմքերն են ԱՎԾ-ի, ՀՀ ֆինանսների նախարարության, Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական տվյալներն ու հրապարակումները, Համաշխարհային բանկի, միջազգային արժույթի հիմնադրամի, BERI միջազգային կազմակերպության, ՏՀԶԿ-ի կողմից հրապարակված զեկույցներն ու պաշտոնական վիճակագրությունը, զեկույցները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, հետազոտական՝ համեմատական, վերլուծության մեթոդները:

Հեղազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքում մշակվել և ստացվել են տեսական ու գործնական նշանակության արդյունքներ, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

- արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիայի միջոցով վերլուծվել և գնահատվել են մակրոտնտեսական ցուցանիշների (զբաղվածների թիվ, հարկային բեռ) ազդեցությունը գործարար միջավայրի բարելավման վրա, ինչպես նաև բացահայտվել և հիմնավորվել են հարկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործում,
- գործարար միջավայրի վրա ազդող գործոնների վերլուծության արդյունքում մշակվել է տնտեսաչափական մոդել, որի միջոցով հաշվարկվել է հարկային բեռի ազդեցությունը գործարար միջավայրի վրա՝ առաջարկելով իրականացնել հարկային բարեփոխումներ՝ ուղղված ուղղակի հարկերի մասով դրույքաչափերի, հարկային արտոնությունների վերանայմանը,
- հիմնավորվել և գնահատվել է ՀՀ տնտեսության զարգացման գործում ուղղակի ներդրումների և հարկային եկամուտների կոռելյացիոն կապը, ինչպես նաև մշակվել է միջոցառումների համալիր՝ ուղղված տնտեսության դիվերսիֆիկացմանը, գործարար միջավայրի բարելավմանը և տնտեսության մրցունակության բարձրացմանը,
- մշակվել և առաջարկվել է ԵԱՏՄ երկրների գործարար միջավայրի վրա

ազրող տնտեսական քաղաքականության կապը հիմնավորող կառուցակարգ, ինչպես նաև հիմնավորվել են հարկերի հավաքագրման դիվերսիֆիկացման և տնտեսության մրցունակության բարձրացման միջոցառումները:

Հեղազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը: Ատենախոսությունը գիտական հետազոտություն է, որտեղ կատարված վերլուծություններից բխող հետևությունների ու եզրակացությունների հիման վրա արված առաջարկությունները, ինչպես նաև գործարար միջավայրի վարկանիշի բարձրացման արդյունքում հարկային համակարգի բարելավման հիմնախնդիրներից ելնելով առաջարկված գնահատումները կարող են օգտագործվել գործադիր և օրենսդիր մարմինների կողմից՝ գործարար միջավայրի զարգացման, տնտեսության ոլորտներում ներդրումների ներգրավման, հարկային արտոնությունների և հարկային դրույքաչափերի վերանայման ուղղությամբ իրականացվող աշխատանքների կատարման ժամանակ:

Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել պետական կառավարման մարմինների, գործարարների, հարկային մարմինների, ինչպես նաև գործարարության և հարկային համակարգի հիմնախնդիրներով զբաղվող տնտեսագետ-իրավաբանների, հետազոտողների համար:

Արենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված 6 գիտական հոդվածներում:


Արենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության շարադրված է 165 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Արենախոսության առաջին՝ «Գործարար միջավայրը և հարկային բարեփոխումների կարևորությունը տնտեսության զարգացման գործում» **գլուխը** նվիրված է գործարար միջավայրի էությանը, դրա կառուցվածքին ու առանձնահատկություններին, գործարար միջավայրի և հարկային մարմինների պետական կարգավորումներին, ինչպես նաև ՀՀ գործարար միջավայրի ձևա-

վորման ինստիտուցիոնալ հիմքերին:



Գծապատկեր 1. Գործարար միջավայրի կարգավորումը¹

Տնտեսական հարաբերությունների զարգացման արդյունքում ստեղծվում են նոր հնարավորություններ, որոնք առավել դինամիկ են և ճկուն, արագ են արձագանքում սպառողների և կառավարության որոշումներին: Դրանք իրենց հերթին ձևավորում են նպաստավոր նախադրյալներ գործարար միջավայրի զարգացման համար:

«Գործարար միջավայր» տնտեսագիտական հասկացության վերաբերյալ դեռևս չի տրվել սպառիչ և վերջնական սահմանում: Այն շատ հաճախ նույնացվում է «բիզնես», «ինվեստիցիոն», «ձեռներեցություն» հասկացությունների հետ:

Ըստ Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցի տվյալների յուրաքանչյուր տարի վերլուծվում և գնահատվում են 189 երկրների գործարար միջավայրի վարկանիշը: Գծապատկեր 1-ում ներկայացվել են գործարարությամբ զբաղվելու ընթացակարգերը, և գործարարությամբ զբաղվելու դյուրինության առումով անհրաժեշտ է կրճատել բիզնեսի մուտքի արգելքները, ինչպիսիք են՝ գրանցումն ու աշխատողների ընդունումը, այնուհետև՝ իրականացնել ինստիտուցիոնալ բարեփոխումներ, ինչպիսիք են՝ շինարարության թույլտվության, էլեկտրաէներգիայի կայանների

¹ Հիմք է ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի գործարարության դյուրինության ընթացակարգերը <http://www.doingbusiness.org/>

միացման, սեփականության գրանցման ընթացակարգերի պարզեցումն ու վարչարարական ռիսկերի վերացումը: Գրեթե բոլոր երկրներում բավականին խնդրահարույց են, այսպես ասած, «սարդային գործարքները», ինչպիսիք են՝ հարկերի վճարումը, միջսահմանային առևտուրը, ինչպես նաև առկա են ֆինանսավորման խնդիրներ՝ վարկավորումը, ներդրողների շահերի պաշտպանությունը: Ուստի, գործարար միջավայրի բարելավման ինստիտուցիոնալ զարգացման համար անհրաժեշտ է վերացնել գործարարության մուտքի և ելքի արգելքները²:

Արենախոսության երկրորդ՝ «Հարկային համակարգի և գործարար միջավայրի փոխազդեցության վերլուծությունը» **գլխում** իրականացվել է գործարար միջավայրի գործոնային վերլուծություն, գնահատվել են մակրոտնտեսական և բյուջետային ցուցանիշների ազդեցությունը գործարար միջավայրի վրա:


Աշխատանքում մանրամասն վերլուծվել են Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի զեկույցները «Գործարարությամբ զբաղվելու» վերաբերյալ³: Ըստ այդմ, հիմնավորվել է հարկային բեռի ազդեցությունը գործարար միջավայրի և տնտեսության զարգացման վրա, ինչպես նաև կատարվել է համեմատական վերլուծություն տարածաշրջանային երկրների հետ: Իրականացնելով համեմատական վերլուծություն ՀԲ-ի «Գործարարությամբ զբաղվելու» զեկույցի արդյունքներով պարզվել է, որ 2008-2015թթ. ՀՀ-ում հարկային բեռն ունեցել է տատանման միտում, մասնավորապես՝ 2008 թվականին այն 51,2 տոկոսից 2009 թվականին կտրուկ նվազել է և 12,6 տոկոսով 38,6 տոկոս, որը պահպանվել է 38,6 տոկոսի սահմանում մինչև 2011 թվականը:

Այնուհետև, 2012 թվականին հարկային բեռն ավելացել է նախորդ տարվա նկատմամբ 0,2 տոկոսային կետով, իսկ սկսած 2014 թվականից հարկային բեռը նվազել է և 2015 թվականին հասել է 20,9 տոկոս: Դրական փոփոխություններ են նկատվել նաև Վրաստանում, մասնավորապես՝ 2008 թվականին հարկային բեռը 38,6 տոկոսից նվազել է 22,2 տոկոսով և 2015 թվականին գնահատվել շուրջ 16,4 տոկոս (գծապատկեր 2):

Պետք է նշել, որ գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնց գնահատումը բավականին բարդ և աշխատատար գործընթաց է: Այդ ուղղությամբ կատարվել են բազմաթիվ հետազոտություններ, վերլուծություններ ինչպես օտարազգի, այնպես էլ՝ հայ տնտեսագետների կողմից:

² Uwe D., Frijters P., Winter-Ebmer R. Reducing Start-up Costs for New Firms: The Double Dividend on the Labor Market // Scandinavian Journal of Economics. – 2006. – N 108. – P. 317-337.

³ Հիմք է ընդունվել «Գործարարությամբ զբաղվելը աշխարհում» զեկույցի տվյալները 2007-2015թթ., <http://www.doingbusiness.org/>



Գծապատկեր 2. 2008-2015թթ. հարկային բեռը ԵԱՏՄ և Կարածաշրջանային երկրներում, %

Օրինակ՝ տարբեր երկրներում լայն կիրառություն է ստացել BERI⁴ միջազգային հետազոտական կազմակերպության կողմից կատարված ներդրումային և գործարար միջավայրի հետազոտության վերաբերյալ: Այսպես, համաձայն վերջինիս յուրաքանչյուր տարի առանձնացվում են լավագույն երկրները, որոնց վերաբերյալ տրվում են վարկանիշներ⁵:

« տնտեսության զարգացման կարևորագույն նախապայմաններից է գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը, որին հասնելու համար անհրաժեշտ է Հայաստանում ստեղծել ձեռնարկատիրական գործունեության պետական կարգավորման, ծառայությունների և վարչական ընթացակարգերի պարզ, թափանցիկ և քիչ ծախսատար միջավայր, ապահովել հավասար մրցակցային պայմաններ, գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ, ինչպես նաև իրականացնել հարկային և մաքսային հավասարակշռված քաղաքականություն: Բացի այդ, աշխատանքում ներկայացվել և վերլուծվել են լավագույն արտաքին առևտուր և ներդրումներ ունեցող երկրները, մասնավորապես, 15 լավագույն ներդրումային միջավայր ունեցող երկրներից Հոնգկոնգը, 2-րդ տեղում է Սինգապուրը, իսկ 4-10-րդ վարկանիշները պատկանում են Եվրոպական երկրներին (Իռլանդիա, Բելգիա, Շվեյցարիա, Նիդերլանդներ, Շվեդիա, Անգլիա): Մրցակցության և գործարար միջավայրի վարկանիշի համաձայն գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ 2014 թվականին լավագույն երկիր է ճանաչվել Սինգապուրը, ինչը պահպանվել է նաև 2015 թվականին: Փոփոխություններ են կատարվել 2-րդ հորիզոնականի մասով՝ Նոր Զելանդիան 2015 թվականին իր տեղը զիջելով Շվեյ-

⁴ BERI- Business Environment Risk Intelligence

⁵ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>

ցարիային, 4-րդ հորիզոնականի մասով 5-րդ հորիզոնականի մասով Կորեան՝ Ավստրալիային և այլն⁶:

Հայաստանի Հանրապետությունը, լինելով փոքր բաց տնտեսություն, չի կարող խուսափել արտաքին գործոնների ազդեցությունից, մասնավորապես՝ տարածաշրջանային և հետանցումային երկրներում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական իրավիճակներից, ինտեգրացիոն, փոխարժեքային տատանումներից, քաղաքական դիրքորոշումից, ռազմական մարտահրավերներից: Ավելին, ՀՀ տնտեսության զարգացման վրա ազդում են տարածաշրջանային երկրների ռեսուրսային ապրանքների (նավթ, դիզելային, բենզին, գազի) գները, Ռուսաստանում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական գործընթացները: Այդ առումով, աշխատանքում ներկայացվել են նաև ԵԱՏՄ անդամ երկրների օրենսդրությունը, մասնավորապես շեշտը դնելով հարկային և մաքսային օրենքներին: Ի սկզբանե, ԵԱՏՄ-ի ստեղծման նպատակը անդամ պետությունների կայուն զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, որը ենթադրում է բնակչության կենսամակարդակի բարելավում, կապիտալի, աշխատուժի, ապրանքների և ծառայությունների միասնական շուկայի ձևավորում, ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացում:

ժամանակակից աշխարհում գնալով մեծանում է հարկային համակարգի և գործարար միջավայրի փոխառնչության վերլուծության անհրաժեշտությունը: Գործարար միջավայրի վրա հարկային համակարգի ազդեցությունն, առաջին հերթին վերլուծվել և գնահատել են Ա.Լաֆֆերի կողմից միջոցով, սակայն այն, ըստ էության, այդ կապը գնահատել է միայն տեսական առումով: Այդ առումով, անհրաժեշտ է ունենալ որոշ մակրոտնտեսական ցուցանիշներ և ենթակառուցվածքային գործոններ, և դրանց ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզել, թե Լաֆֆերի կողմից վրա գտնվող որ կետերն են համարվում օպտիմալ տվյալ երկրում գործարար միջավայրը զարգացնելու համար: Որպես այդպիսին է ծառայում արտադրական ֆունկցիան՝ ըստ Կոբ-Դուգլասի⁷, որին ավելացնելով ենթակառուցվածքային կամ ինստիտուցիոնալ գործոնը, օրինակ, հարկային բեռը, հնարավոր է գնահատել տնտեսության և գործարար միջավայրի կախվածությունը: Այդ առումով, լայն տարածում է ստացել Ե.Վ.Բալազկու մեթոդով հաշվարկված արտադրական-ենթակառուցվածքային ֆունկցիան⁸:

$$GDP = \frac{TbH}{\sqrt{A^{aTs}(1+Ts)}} L^{bTs} Ts^{cTs} \quad (1)$$

որտեղ՝

⁶ <https://www.edb.gov.sg/content/edb/en/why-singapore/about-singapore/facts-and-rankings/rankings.html>

⁷ http://economics.about.com/cs/economicsglossary/g/cobb_douglas.htm

⁸ Балацкий Е.В. «Анализ елияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций». С.89-90

GDP-ն՝ անվանական ՀՆԱ-ի մեծությունն է, մլն. դրամ,
 L-ն՝ զբաղվածների թիվն է, մլն մարդ,
 A-ն՝ արտադրական գործոնների տրենդային գործակիցն է, որը հաշվարկվում է բազմագործոնային ռեգրեսիոն հավասարման միջոցով,
 t-ն՝ տարի,
 a, b, c-ն՝ անկախ փոփոխականների գործակիցներն են, որոնք անհրաժեշտ է գնահատել պանելային շարքերի միջոցով,
 T_t-ն՝ հարկային բեռն է, որը հաշվարկվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցությամբ,%
 T_s-ն՝ հարկային համակարգի կայունության գործակիցն է, որը կոչվում է նաև հարկային համակարգի կայունության կամ արդյունավետության գործակից և հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$T_s = |T_b(t) - T_b(t-1)| \quad (2)^9$$

Աշխատանքում Բալացկու մեթոդով հաշվարկվել են 2001-2015թթ. մակրոտնտեսական ցուցանիշների լոգարիթմական արժեքները՝ նպատակ ունենալով ցույց տալ յուրաքանչյուր գործոնի 1 տոկոսային կետի փոփոխությունն ինչպես է ազդում կախյալ փոփոխականի վրա: Հետևաբար՝ խնդիր է դրվել որոշել անկախ փոփոխականների ազդեցությունը կախյալ փոփոխակի վրա, այսինքն՝ գնահատել նրանց էլաստիկության գործակիցները՝ (a, b, c)՝

$$T_b^{0.01} \text{ LN GDP} = a(T_s + T_s^2) + bT_s \text{ LN L} + c \text{ LN } T_s \quad (3)^{10}$$

(3) բանաձևի միջոցով գնահատվել է, թե յուրաքանչյուր անկախ փոփոխականի 1 տոկոսային կետի փոփոխության դեպքում որքան է փոխվում կախյալ փոփոխականը, այսինքն՝ զբաղվածների թվի և հարկային համակարգի կայունության փոփոխությունը 1 տոկոսային կետով որքան է փոխում ՀՆԱ-ն: Ըստ այդմ, հաշվարկվել են ընտրված փոփոխականների էլաստիկության գործակիցները, ինչպիսիք են a, b, c, որոնք բերվել են լոգարիթմական արժեքներով:

$$T_b^{0.01} \text{ LN GDP} = 791.1942467 + 1.795933595 \times (T_s + T_s^2) + 23.21331455 T_s \times \text{LN L} + 3.004048369 \times \text{LN } T_s \quad (4)$$

Պետք է նշել, որ T_b^{0.01} փոփոխականը ներկայացվել է 0.01 աստիճանի տեսքով՝ նպատակ ունենալով ցույց տալ հարկային բեռի 1 տոկոսային կետի կախվածությունը ՀՆԱ-ից: (4)-ում ներկայացված արժեքները հաշվարկման արդյունքում հիմնավորվել է, որ հարկային համակարգի կայունությունը, զբաղվածների թիվն էական և նշանակալի ազդեցություն ունեն հարկային բեռի և ՀՆԱ-ի վրա, քանի որ դրանց վիճակագիրները փոքր են 5%-ից, հետևաբար, մոդելը ճշգրիտ է: Այսինքն՝ հարկային համակարգն ու դրա քա-

⁹ Балацкий Е.В. «Анализ елияния налоговой нагрузки на экономический рост с помощью производственно-институциональных функций». 2010, С.89-90

¹⁰ Նույն տեղում:

ռակուսին բերում են հարկային բեռի ու ՀՆԱ-ի 1.79 տոկոսային կետի փոփոխության, հարկային համակարգի կայունության և զբաղվածների թվի լոգարիթմական արժեքի արտադրյալի 1 տոկոսային կետի փոփոխությունը ավելացնում են հարկային բեռն ու ՀՆԱ-ն 23.2 տոկոսային կետով, իսկ զբաղվածների թվի արտադրյալը հարկային համակարգի կայունության լոգարիթմական արժեքի հետ բերում են կախյալ փոփոխականների 3 տոկոսային կետի փոփոխության: Հետևաբար՝ աղյուսակ 1-ի տվյալներից կարող ենք եզրակացնել, որ TsLNL-արտադրյալն առաջացնում է ամենամեծ փոփոխությունը հարկային բեռի և անվանական ՀՆԱ-ի վրա՝ ավելացնելով վերջիններից արտադրյալը լուրջ 23.2 տոկոսով, ինչն ունի իր տնտեսական հիմնավորվածությունը:

Աղյուսակ 1.

2001-2015թթ. արտադրական ինստիտուցիոնալ ֆունկցիայի գնահատման արժեքները ՀՀ-ում¹¹

Մոդելի փոփոխականներ	Գործակիցներ	F-վիճակագիր-5%	Ստանդարտ շեղում
C	791.1942	0.0004	153.6714
(Ts+ Ts ²)	1.795934	0.0007	0.374000
Ts LN L	23.21331	0.0145	14.58074
L LN Ts	3.004048	0.0017	0.707236


Համաձայն վերջինիս, զբաղվածների հարկային բեռը եկամտային հարկն է, որը Հայաստանում գանձվում է վարձու աշխատողների աշխատավարձիս 24.4 և 26 տոկոս հարկային դրույքաչափերով: Որքան եկամտային հարկի դրույքաչափը բարձրանում է աշխատողների մոտ կորում է աշխատելու ցանկությունը և նրանք գերադասում են ունենալ ավելի ցածր աշխատավարձ՝ հարկային բարձր դրույքաչափի պատճառով: Մասնավորապես, զարգացած երկրներում հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը բավականին բարձր է, որը չի կաշկանդում գործարար միջավայրը, ինչպես նաև՝ չի նվազում բնակչության կենսամակարդակը: Մինչդեռ ՀՀ-ում 2012 թվականին հարկային բեռը կազմում է 22.7 տոկոս, որը բավականին ցածր է տարածաշրջանային երկրների հետ համեմատած: Սակայն, ըստ էության, նույնիսկ հարկային բեռի ներկայիս մակարդակի պայմաններում դեռևս գոյություն ունեն ինստիտուցիոնալ և կառուցվածքային խնդիրներ, որոնք կաշկանդում են գործարար միջավայրի զարգացմանը: Այդ առումով, վերլուծվել են մակրոտնտեսական և բյուջետային ցուցանիշները, ինչպես նաև հիմնավորվել է դրանց կապը գործարար միջավայրի հետ:

Ազենախոսության երրորդ՝ «Հարկային համակարգի կառավարման գե-

¹¹ Աղյուսակ 1-ը հաշվարկվել է հեղինակի կողմից:

րակայությունները «Հ գործարար միջավայրի բարելավման գործում» **զլխում** ներկայացվել են հարկային համակարգի բարելավման հիմնական ուղիները, հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները, ինչպես նաև՝ գործարար միջավայրի բարեփոխման գերակայությունները:

Աշխատանքում վերլուծվել են հարկային բեռի կառավարման հիմնախնդիրները, հարկային եկամուտների և ՀՆԱ-ի և տնտեսական ակտիվության կապը, առաջարկվել են հարկային միջոցառումներ՝ ուղղված ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացմանը, ներդրումների ներգրավմանը և նոր աշխատեղերի ստեղծմանը: Այդ առումով, ներկայացվել են տարբեր հարկատեսակների արտոնությունները և դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա, մասնավորապես՝ համադրվել են գործող և ԵԱՏՄ հարկային ներդաշնակեցման ներկա մարտահրավերները՝ հանրապետությունում գործարար միջավայրի և տնտեսության գերակա ոլորտների զարգացման համար: Բացի այդ, մի կողմից հիմնավորվել է, որ ՀՀ հարկային համակարգի բարելավման հիմնական ուղղություններից են հարկային բեռի, հարկային դրույքաչափերի վերանայումն ու արտոնությունների սահմանումը: Մյուս կողմից, հաշվարկվել են առանձին հարկատեսակների բեռը, մասնավորապես, առանձնացվել են ուղղակի հարկային բեռի (շահութահարկ/ՀՆԱ և եկամտային հարկ/ՀՆԱ) և անուղղակի հարկային բեռի (ակցիզային հարկ/ՀՆԱ և ԱԱՀ/ՀՆԱ) ցուցանիշները:




Գծապատկեր 3. 2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռը¹², %

2001-2015թթ. հիմնական հարկատեսակների հարկային բեռն ունեցել է աճի և նվազման տարբեր դինամիկաներ: Օրինակ, ուղղակի հարկերի բեռը՝ շահութահարկի և եկամտային հարկի մասով միջինը կազմել են համապա-

¹² http://www.armstat.am/file/article/finansner_2015_1.pdf

տասխանաբար՝ 2,16% և 2,42%, իսկ անուղղակի հարկերի բեռը՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով միջինը՝ 7,85% և 1,57%: Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 3-ի տվյալները, 2001-2015թթ. պետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի մասով նույնպես նկատվել են աճի և նվազման տարբեր դինամիկաներ:

Արդյունավետ է նաև գործարար միջավայրի ինդեքսի կիրառելիությունը ՀՀ-ում, որը հաշվարկվում է ռիսկերի և ընդհանուր տնտեսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ կազմակերպությունների գնահատականների միջինացման միջոցով, ինչպես նաև տնտեսական ակտիվության ինդեքսը՝ թողարկման ծավալների, արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի և պաշարների վերաբերյալ կազմակերպությունների սպասումների միջինացման միջոցով:



Գծապատկեր 4. Գործարար միջավայրի ցուցանիշի դինամիկան 2006-2015թթ.¹³


Գործարար միջավայրի ցուցանիշի հաշվարկման համար ՀՀ կենտրոնական բանկը մշակում է հարցեր, որոնք պատասխանների տարբերակների (նվազում, աճ, կայունություն) ամփոփման միջոցով տրվում են արժեքներ: Վերջիններս տատանվում են 0-100 միջակայքում¹⁴: Օրինակ, եթե ստացվում է 0 արժեք, դա նշանակում է բոլոր հարցվողները նշել են նվազում, իսկ եթե տրվում է 100 արժեքը՝ աճ, 50 արժեքը՝ կայուն վիճակ: Կարելի է ասել, որ գործարար միջավայրի ցուցանիշի կայունության ապահովման համար բավական է ունենալ 45-50 արժեքները: Ըստ այդմ, գործարար միջավայրի ցուցանիշը կտրուկ նվազել է 2009 թվականի 1-ին եռամսյակում, որը պայմանավորված է ՀՀ տնտեսության հիմնական ոլորտների անկմամբ և ֆինանսական ճգնաժամով: 2009թ. 2-րդ եռամսյակից սկսած նկատվել է աճ և

¹³ Նույն տեղում:

¹⁴ <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>

արդեն 2015թ. 4-րդ եռամսյակում նախորդի համեմատ գործարար միջավայրի ցուցանիշն ավելացել է 0.2 կետով՝ կազմելով 50.5՝ շարունակական ապահովելով կայունության մակարդակը (գծապատկեր 4):

Ներդրումային հոսքերի և հարկային եկամուտների միջև գոյություն ունի կապ, այսինքն՝ հարկային եկամուտներն ուղղակի ազդեցություն են ունենում ներդրումային հոսքերի ավելացման վրա:




Գծապատկեր 5. ՀՀ ներդրումների ու հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, %

Օրինակ, գծապատկեր 5-ի տվյալներից կարելի է եզրակացնել, որ գրեթե նույն տեմպերով ավելացել և ակնկալվում են ավելացնել ներդրումների և հարկային եկամուտների տեսակարար կշիռները ՀՆԱ-ում: Օրինակ, ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը 2011 թվականին կազմել է 27.9 տոկոս, հարկային բեռը՝ 21.10 տոկոս, 2012 թվականից սկսած ավելացել են հարկային եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը, իսկ ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը գնալով կրճատվել է: Հարկային եկամուտների ավելացումը ՀՆԱ-ում խոսում է հարկային վարչարարության խստացմամբ, և հարկերի ֆիսկալ գործառույթի վրա ուշադրության կենտրոնացման մասին, մինչդեռ հակառակը, հարկային մարմինները պետք է նաև կիրառեն հարկերի խթանող և սոցիալական գործառույթները՝ գործարար միջավայրի զարգացման և ներդրումային հոսքերի ներգրավման համար:

Աշխատանքում հիմնավորվել է, որ ՀՀ տնտեսության զարգացման առումով անհրաժեշտ է վերանայել տնտեսության իրական հատվածում մշակված ռազմավարությունը՝ ուղղված հարկային արտոնությունների սահմանմանը, հատկապես ռազմավարական և մրցունակ ոլորտներում, ինչպիսիք են՝ վերամշակող և հանքագործական արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, հատկապես՝ սննդի արտադրությունը, որոնք ապահովում են ծախսեր-օգուտներ

արդյունքը: Դրանք հետագայում երաշխիքներ են ստեղծելու փոխարինել այն ապրանքների ներմուծումը, որոնք կարող են արտադրվել Հայաստանում:



Գծապատկեր 6. 2012-2015թթ. գործարար միջավայրն ըստ տնտեսության ոլորտները ՀՀ-ում (միջինացված ցուցանիշներ)⁵


Բացի այդ, գործարար միջավայրի և տնտեսության զարգացման առումով առաջնային խնդիրներից են հարկային բարեփոխումները: Մասնավորապես, հարկային բարեփոխումներին համահունչ անհրաժեշտ է իրականացնել տնտեսական բարեփոխումներ, որոնց հետևողական իրագործումը բյուրեղանալու է այնպիսի ձեռքբերումներով, որոնցում երկարաժամկետ կայուն զարգացման հիմքերն ու համակարգային լուծումները գերակշռում են կարճաժամկետ և արագ արդյունքների նկատմամբ:

Գծապատկեր 6-ում ներկայացվել են 1963 կազմակերպությունների հարցման արդյունքները, որտեղ առանձնացվել են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները:

Ըստ այդմ, պարզվել է, որ հանրապետությունում, բացի հարկային համակարգում առկա թերություններից, ներդրումային միջավայրի զարգացմանը շարունակում են կաշկանդել այլ ենթակառուցվածքային խնդիրներ, ինչպիսիք են՝ վարկավորման պայմանները, վարկային տոկոսադրույքը, օրենսդրական դաշտը, երկրի տնտեսական ու քաղաքական իրավիճակը: Դրանց շարքին կարելի է վերագրել նաև այն, որ դեռևս հանրապետությունում չեն մշակվել հայրենական պայմաններին համապատասխան ներդրումային նախագծեր, որոնք հետագայում կարող են ավելացնել հայրենական արտադրության ծավալներն ու ապահովել արտահանման կայուն աճ:

¹⁵ <https://www.cba.am/am/SitePages/statsseabci.aspx>

Գծ ապատկեր 6. Ներդրումային միջ



ավայրի վրա ազդող գործոնների կառուցվածքն՝ ըստ ենթակառուցվածքների¹⁶

Առենախոսությունում վերլուծվել է նաև ՀՀ հարկային օրենսգիրքը, ինչպես նաև հիմնավորվել է, որ հանրապետությունում հարկային համակարգն անցել է ձևավորման ու զարգացման՝ ավելի քան երկու տասնամյակ ընդգրկող ժամանակահատված, և թեև այդ ընթացքում առանձին օրենսդրական փոփոխություններով մշտապես լուծվել են հարկային համակարգի կատարելագործման, մրցունակության բարձրացման, ազգային տնտեսության գործարար միջավայրի բարելավման ու պետական բյուջեի համար անհրաժեշտ հարկային եկամուտների ապահովման խնդիրները, այդուհանդերձ համաշխարհային տնտեսության զարգացման ներկա միտումները, նոր մարտահրավերները, տարածաշրջանային զարգացումներն ու տնտեսական միությունների շրջանակներում ընթացող ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացները հարկային հարաբերությունները նորովի կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտություն են առաջացրել: Դա նշանակում է, որ հարկային օրենսգրքի հիմնական դրույթների կիրակման միջոցով հնարավոր է նպաստել տնտեսության ակտիվացման, գործարար միջավայրի հետագա բարելավմանն ու օտարերկրյա ներդրումների ներգրավմանը՝ երկարաժամկետ հատվածում ապահովելով կայուն տնտեսական աճ:

Հետազոտության հիմնական արդյունքներն ամփոփվել են «**եզրակացություններ**» բաժնում, որոնց բովանդակությունը կայանում է հետևյալում՝

- ՀՀ գործարար միջավայրի վրա ազդում են տարբեր գործոններ, ընդ որում, հանրապետությունում ինստիտուցիոնալ բարեփոխումների, մասնավորապես՝ հարկային և մաքսային օրենսդրության, ներդրումների կարգավորման, գործազրկության կրճատման, հարկերի հավաքագրման դիվերսիֆիկացման և տնտեսության մրցունակության բարձրացման միջոցառումներն անմիջական ազդեցություն են ունեցել հարկային համակարգի վրա:
- ՀՀ հարկային համակարգի արդյունավետության բարձրացման և գործարար միջավայրի բարելավման համար անհրաժեշտ է բացահայտել տնտեսության զարգացման գերակայություններ և փնտրել ուղիներ՝ արտաքին շու-

¹⁶ <http://www.armstat.am/file/article/nerdrum-het-02-iii-5.6.pdf>

կաները գրավելու համար: Այդ առումով, ժամանակակից մարտահրավերներից են տնտեսական բնույթի միջոցառումները՝ ուղղված հարկային բարեփոխումների գերակայությունների սահմանմանը, տնտեսության աշխուժացմանը:

- ՀՀ հարկային համակարգի կայունության ապահովման և ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացների համատեքստում առաջնային խնդիրներից են հարկային բեռի գնահատումը և դրա օպտիմալ բաշխումը: Այդ առումով, հարկային բարեփոխումները նպատակ են հետապնդում պետական բյուջեում ապահովել հարկային եկամուտների շարունակական աճ: Այսինքն՝ շեշտը դրվում է հարկերի ֆիսկալ գործառույթին՝ անտեսելով հարկերի կարգավորիչ և խթանող գործառույթների կիրառությանը: Դեռևս հարկային համակարգում հիմնական կշիռը տրվում է սպառման հարկմանը, իսկ դա նշանակում է, որ հարկային բեռի օպտիմալացման հարցում անհրաժեշտ է իրականացնել արմատական փոփոխություններ, որոնք պայմանավորված են հարկային պարտավորությունների հաշվարկման նոր համակարգի ներդրման հետ:

- Աշխատանքում վերլուծելով գործող հարկային արտոնությունները տարբեր հարկատեսակների գծով, առաջարկվում է կրճատել այն հարկային արտոնությունները, որոնց հետագա կիրառությունը չի հիմնավորվում ծախսեր-օգուտներ արդյունքներով: Ավելին, հարկային արտոնությունները պետք է տրամադրվեն միայն բացառիկ դեպքերում՝ ելնելով ազգային տնտեսության ռազմավարական զարգացման նախապես սահմանված նպատակներից և ծրագրերից՝ ըստ վերջնաժամկետների և գործունեության կոնկրետ ոլորտի: Հակառակ դեպքում, տնտեսական իրավիճակներում հաճախ արտոնությունից օգտվելը հարկ վճարողների համար ոչ միայն չի ապահովում նպաստավոր հարկային միջավայր, այլ, երբեմն, հակառակ ազդեցությունն է ունենում:

- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներում, հարկային համակարգի բարելավման համատեքստում առաջարկվում է վերանայել ուղղակի հարկերի դրույքաչափերը և իրականացնել փոփոխություններ՝ նպատակ ունենալով ներդաշնակեցնել ՀՀ հարկային համակարգը ԵԱՏՄ-ի հարկային համակարգի հետ: Մասնավորապես, առաջարկվել է վերանայել եկամտային հարկի դրույքաչափը 24.4, 26, 36 տոկոսից դարձնելով միասնական 20 տոկոս: Գործող դրույքաչափի փոփոխությունը, իր հերթին, կբերի պետական բյուջեի հարկային եկամուտների կրճատմանը, սակայն առանձին հարկատեսակների բեռը գնահատելիս, հիմնավորվել է, որ ՀՀ-ում եկամտային հարկի բեռը բարձր է, որը գանձվում է աշխատավարձից: Այս հանգամանքը նկատելիորեն խոչընդոտում է ազգային տնտեսության մրցունակությանը և բացի այդ, խրախուսում է աշխատավարձի թերհայտարարագրումը: Ներկայացվող բարեփոխումները մի կողմից կարող են լուծել մակրոտնտեսական և սոցիալական խնդիրները, ինչպիսիք են՝ աղքատության կրճատումը, զբաղվածության ավելացումը, աշխատավարձերի իրական մեծությունների հայտարարագրումն ու սովերային տնտեսության կրճատումը, մյուս կողմից, այդ առաջարկությունները կարող են նվազեցնել պետական բյուջեի հարկային եկամուտները, սակայն առաջացած տարբերությունը կարող է լրացվել այլ հարկերի դրույքաչափերի բարձրացմամբ:

• Հարկային բեռի և պետական բյուջեում հարկային եկամուտների չեզոքության ապահովման համար առաջարկվում է եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխմանը զուգահեռ վերանայել անուղղակի հարկերից ակցիզային հարկի դրույքաչափերը, քանի որ դրանք մի քանի անգամ ցածր են եվրոպական և ԵԱՏՄ երկրներում համանման դրույքաչափերից:

• ՀՀ-ում սովորաբար շրջանառությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով ներկայացվել և առաջարկվել է վերանայել գործարքների և առանձին ապրանքների փաստաթղթավորման նկատմամբ պահանջներն ու հսկողությունը, մասնավորապես, փաստաթղթավորման ցածր մակարդակը՝ հնարավորություն չի ընձեռում պարզել իրական ՓՄՁ սուբյեկտներին և նրանց համար մշակել ու իրականացնել մեղմ հարկային քաղաքականություն և վարչարարություն, ինչպես նաև խոշոր տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռում թաքցնել հսկայական իրացման շրջանառություններ՝ դրանով իսկ հարկային բեռը տեղափոխելով փոքր հարկ վճարողների վրա:

Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Դրամբյան Ա.Գ., Բիզնես միջավայրի կառուցվածքն ու դրա վրա ազդող գործոնները, «Ֆինանսներ և էկոնոմիկա» #6 -189.: 2014, էջ 55-57:
2. Դրամբյան Ա.Գ., Գործարար միջավայրի վարկանիշային գնահատականի հարցի շուրջ, «Ֆինանսներ և էկոնոմիկա» #6 -189, ՀՏԴ 332-14 2014, էջ 50-52:
3. Դրամբյան Ա.Գ., ՀՀ գործարար միջավայրի վարկանիշային գնահատման ինստիտուցիոնալ հիմքերը»: «Այլընտրանք» գիտական հանդես: #3, հուլիս-սեպտեմբեր, 2015, էջ 32-38:
4. Դրամբյան Ա.Գ., Պետության և գործարարության համագործակցության հիմնախնդիրները, «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտ. հոդվ. ժողովածու, 2015, էջ 182-185:
5. Դրամբյան Ա.Գ., ՀՀ արտահանման վրա ազդող հարկային արտոնությունների հարցի շուրջ, «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվ. ժողովածու, 2015, էջ 182-185:
6. Դրամբյան Ա.Գ., ՀՀ մակրոտնտեսական քաղաքականության և գործարար միջավայրի փոխադարձ կապը, «Ֆինանսներ և էկոնոմիկա» #7-8 (191-192) -189, ՀՏԴ 1829-3689, 2016, էջ 112-114:

АНАИТ ГАГИКОВНА ДРАМБЯН

ВОЗДЕЙСТВИЕ УПРАВЛЕНИЯ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ НА БИЗНЕС-СРЕДУ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его секторами».

Защита состоится 21-го июня 2017 года, в 13.30 часов на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: г.Ереван, 0009, улица Х.Абовяна 52.

РЕЗЮМЕ

Цель и задачи исследования. Основной целью диссертационного исследования является обоснование роли налоговой системы, влияющей на бизнес-среду РА, а также предложение путей для ее улучшения. Для достижения указанной цели в диссертации поставлены и решены следующие задачи:

- изучить сущность, структуру и особенности бизнес-среды,
- проанализировать проблемы государственного регулирования бизнес-среды и налоговых органов,
- рассмотреть институциональные основы формирования бизнес-среды РА и провести их сравнительный анализ,
- провести анализ путей улучшения налоговой системы и предложить налоговые мероприятия, направленные на привлечение инвестиций в отрасли экономики РА и обеспечение устойчивого экономического роста,
- предложить проведение налоговых реформ, направленных на упрощение налоговых отношений и гармонизацию интеграционных процессов.

Объект и предмет исследования. Объектом исследования является бизнес-среда РА, а предметом исследования - воздействие налоговой системы на улучшение бизнес-среды РА.

Основные научные результаты и их научная новизна. В процессе исследования были разработаны и получены результаты теоретического и практического значения, содержание которых заключается в следующем:

1. Посредством производственно-инфраструктурной функции проведен анализ и дана оценка влияния макроэкономических показателей (численности занятых, налогового бремени) на улучшение бизнес-среды, а также выявлена и обоснована роль налоговой системы в развитии экономики.
2. По результатам анализа факторов, влияющих на бизнес-среду, разработана эконометрическая модель, с помощью которой рассчитано воздействие налогового бремени на бизнес-среду и предложено проведение налоговых реформ, направленных на пересмотр ставок, налоговых льгот по части прямых налогов.
3. Обоснована и дана оценка корреляционной связи между прямыми инвестициями и налоговыми доходами в развитии экономики РА, а также разработан комплекс мероприятий, направленных на диверсификацию экономики, улучшение бизнес-среды и повышение конкурентоспособности экономики.
4. Разработан и предложен механизм обоснования взаимосвязи экономической политики и бизнес-среды стран ЕАЭС, а также обоснованы мероприятия по диверсификации сбора налогов и повышению конкурентоспособности экономики.

ANAHIT GAGIK DRAMBYAN

THE IMPACT OF THE TAX MANAGEMENT SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA ON THE BUSINESS ENVIRONMENT

The abstract of the dissertation for the pursuing of the PhD in the field “Economics and Management of Economy and its Spheres” 08.00.02

The defense of the dissertation will take place on June 21, 2017 at 13.30 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of SCC of RA acting at the Yerevan State University. Address: Republic of Armenia, Yerevan, 0009, 52 Kh.Abovyan str.

ABSTRACT

The Purpose and Objectives of the Research: The main purpose of the dissertation thesis is to justify the impact of tax system on the business climate as well as to propose approaches to improving the system. For this purpose the following objectives have been defined and met in the dissertation thesis:

- To study the nature, structure and characteristics of the business climate;
- To analyze the state regulation issues of the business climate and tax authorities;
- To study the institutional fundamentals of the formation of the business climate of the Republic of Armenia as well as to implement comparative analysis;
- To analyze the approaches to improving the tax system and to propose tax measures aimed at the attraction of investments in various sectors of the Armenian economy and ensuring the economic growth;
- To propose the implementation of tax reforms aimed at the simplification of tax relations and harmonization of integration procedures.

The object and subject of the research: The object of the research is the business climate of Armenia and the subject is the impact

of the tax system on the improvement of the business climate in Armenia.

The Main Research Results and scientific novelty of the Dissertation Thesis: The results of the study and analysis covered by the dissertation thesis are of theoretical, methodological and applied applications and the scientific novelty of which are the followings:

1. The impact of macroeconomic indicators (number of employed, tax burden) upon the business climate was estimated through production-infrastructure function and analyzed as well as the role of tax system in developing the economy has been identified and justified;
2. An econometric model has been constructed as a result of the analysis of factors affecting the business climate through which the impact of tax burden upon business climate has been estimated proposing to initiate reforms aimed at the revision of tax rates and tax privileges and/or incentives;
3. The correlation between direct investments and tax revenues in the developing the economy of the Republic of Armenia has been justified and estimated as well as comprehensive package of measures was elaborated aimed at the diversification and enhancement of competitiveness of the economy and the improvement of business climate;
4. A mechanism justifying the nexus of economic policies upon the business climate of the EAEU member-states has been elaborated and proposed as well as measures aimed at diversification of levying and enhancement of competitiveness of economy have been justified.

